## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար թղթի ձեռքբերման նպատակով «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի փետրվարի 14-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/01-2 պայմանագրում 2018 թվականի մարտի 01-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն

Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում

Պայմանագրի 8.5, 8.13 կետեր:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 14.02.2018թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/01-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «01» «03» 2018թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Տոնէքս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Շաբոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 14.02.2018թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/01-2» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը. կողմերը որոշեցին՝ պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«Տոնէքս» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ., 45 շ., 42 բն. |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 2052222074951001 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 01401171 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Ա. Շաբոյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ |

Հավելված N 1
« 14 » փետրվարի 2018 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/01-2» ծածկագրով պայմանագրի
« 01 » « 03 » 2018թ. կնքված N 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 30197631/304 | Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | | | 304 000 | 1 064 000 | 1 064 000 | 1 064 000 | 1 824 000 | 1 824 000 | 1 824 000 | 3 040 000 | 3 040 000 | 3 040 000 | **3 040 000** |
| 5 | 30197631/304 | Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | | | 128 590 | 450 065 | 450 065 | 450 065 | 771 540 | 771 540 | 771 540 | 1 285 900 | 1 285 900 | 1 285 900 | **1 285 900** |
| 7 | 30197631/304 | Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | | | 184 758 | 646 653 | 646 653 | 646 653 | 1 108 548 | 1 108 548 | 1 108 548 | 1 847 580 | 1 847 580 | 1 847 580 | **1 847 580** |
| 8 | 30197631/304 | Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | | | 349 800 | 1 224 300 | 1 224 300 | 1 224 300 | 2 098 800 | 2 098 800 | 2 098 800 | 3 498 000 | 3 498 000 | 3 498 000 | **3 498 000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Վ. [illegible]յան

/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Տոնէքս» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ., 45 շ., 42 բն.
Հ/Հ՝ 2052222074951001
ՀՎՀՀ՝ 01401171
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Շ[illegible]արյան

/ստորագրություն/